Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-06-2024 թ. որոշմամբ
«ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԴԱՎԹԱՇԵՆ ԴԱՎԹԱՇԵՆ ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 6 ԲՆ.22
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1170357
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2021-03-30
1.5 ՀՎՀՀ-ն		00234033
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55238917
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.csiefoundation.am
1.8 Էլեկտրոնային փոստը		a.karapetyan@philin.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ռաֆֆի Պաղճեան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	10	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ԱԹՍ-ների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների իրականացում	277,167,252
	Խորհրդատվական ծառայություններից մուտք	118,750,000
	Լիցենզիայի օգտագործման թույլտվությունից մուտք	155,000,000

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ԱԹՍ-ների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների իրականացում	226,733,269	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	521,454,855	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	226,733,269	

Նշումներ՝

Հաշվետվությունը լրացված է դրամարկղային մեթոդով

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ _____էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

Digitally signed by MARGARYAN ANAHIT 7914810347
Date: 2024.09.02 16:25:12 AMT

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Գործունեության մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 13-ում՝ 2023թ.-ի ընթացքում Հիմնադրամը մատուցել է խորհրդատվական և լիցենզիայի օգտագործման իրավունքի փոխանցման ծառայություններ, որոնք գտնվում են Հիմնադրամի հիմնական գործունեության շրջանակներից դուրս: Հիմնադրամի ղեկավարությունը չի կարող գնահատել այս ծառայությունների շարունակակությունը հաջորդ ֆինանսական տարիների ընթացքում, մինչդեռ նման ֆինանսական արդյունքների պահպանումը մեծապես կարող է կախված լինել նման ծառայությունների մատուցումից: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հարցի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և

Grant Thornton

իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին՝ ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

2 օգոստոսի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	13,048	10,891
Ոչ նյութական ակտիվներ		-	54
Տրամադրված փոխառություններ	6	16,493	14,865
		29,541	25,810
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	7	791,824	42,032
Պաշարներ	8	36,405	35,427
Մնացորդներ բանկերում	9	35,346	5,048
		863,575	82,507
Ընդամենը ակտիվներ		893,116	108,317
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	13,049	10,946
		13,049	10,946
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամտին վերաբերող շնորհներ	11	136,868	72,156
Կրեդիտորական պարտքեր	12	591,385	40,109
Շահութահարկի գծով պարտավորություն	13	32,992	-
		761,245	112,265
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		118,822	(14,894)
		118,822	(14,894)
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		893,116	108,317

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. օգոստոսի 2-ին:

Ռաֆֆի Պաղճեան
Տնօրեն

Աստղիկ Կարապետյան
Հաշվապահական ընկերության ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Գործունեության մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառայություններից հասույթ	13	830,473	-
Ծառայությունների ինքնարժեք	13	(647,646)	-
Նվիրատվությունից եկամուտ	14	210,352	676,869
Այլ եկամուտ		656	-
Իրացման ծախսեր		(17,596)	-
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր		(48,052)	(222,448)
Նվիրաբերությունների գծով ծախսեր	15	(34,405)	(240,996)
Հատուցումներ աշխատակիցներին		(115,287)	(100,783)
Ֆինանսական ակտիվների արժեզրկում	5	-	(96,028)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(6,675)	(10,478)
Մաշվածություն և ամորտիզացիա		(2,650)	(2,189)
Բանկային ծախսեր		(1,250)	(2,165)
Այլ ծախսեր		(2,757)	(1,782)
		165,163	-
Ֆինանսական ակտիվների վերաչափումից օգուտ		-	381
Ֆինանսական եկամուտ	6	1,628	1,528
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս		(34)	(3,066)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		166,757	(1,157)
Շահութահարկի գծով ծախս	16	(33,041)	-
Տարվա արդյունք		133,716	(1,157)

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	(13,737)	(13,737)
Տարվա արդյունք	(1,157)	(1,157)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(14,894)	(14,894)
Տարվա արդյունք	133,716	133,716
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	118,822	118,822

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբեր ի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Նվիրատվություններից ստացված դրամական միջոցներ	277,167	380,212
Մատակարարներից ստացած դրամական միջոցներ	273,750	-
Ստացված այլ դրամական միջոցներ	656	-
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(365,041)	(256,614)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(85,554)	(75,452)
Պետական բյուջե վճարված դրամական միջոցներ (բացի շահութահարկից)	(34,256)	(32,104)
Տրամադրված դրամային նվիրատվություններ	(29,610)	(22,590)
Այլ դրամական վճարումներ	(2,242)	(2,294)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	34,870	(8,842)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տրամադրված փոխառությունների մարում	-	1,000
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(4,753)	(9,981)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(4,753)	(8,981)
Բանկերում մնացորդների զուտ աճ/ (նվազում)	30,117	(17,823)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	181	(3,145)
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	5,048	26,016
Բանկերում մնացորդներ տարվա վերջում	35,346	5,048

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամը (Հիմնադրամ) հիմնադրվել է 2021թ. մարտի 30-ին՝ որպես ոչ առևտրային կազմակերպություն:

Հիմնադրամը հետապնդում է կրթական, գիտական, զարգացման, սոցիալական, բարեգործական և այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամի միակ հիմնադիր է Ռաֆֆի Պաղճեանը:

Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

- Հայաստանի Հանրապետությունում գիտության, կրթության, ռազմարդյունաբերության և տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտներում նորարարությունների ներդնումը և զարգացումը;
- Հայաստանի Հանրապետությունում գիտության, կրթության, ռազմարդյունաբերության և տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտներում հետազոտության և զարգացման իրականացումը;
- Գիտության, կրթության, ռազմարդյունաբերության և տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտների մասնագետներին, կազմակերպություններին և այլ անձանց աջակցումը;
- Գիտության և կրթության ոլորտի նորարարությունների համար հատուկ միջավայրի ստեղծումը և զարգացումը, հայաստանյան և միջազգային տեխնոլոգիական և ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացումը;
- Տեխնոլոգիական արդյունաբերության համար ռազմավարական գիտական ուղղությունների խթանումը և կիրառական լուծումների տրամադրումը;
- Կրթության, մասնագիտական ուսուցման և գիտական նորարարությունների զարգացումը;
- Սփյուռքի և հայաստանյան ընկերությունների ինտեգրումը առաջատար գիտական հնարավորություններին :

Հաշվետու տարում Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 10 մարդ (2022թ. -ին՝ 6 մարդ):

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 3-րդ Թաղամաս 6 բն. 22:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Հիմնադրամ գործունեության վրա:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նկատվել է փոխարժեքի կայունություն, հետևաբար ղեկավարությունը չի ակնկալում, որ հայկական դրամի հետագա արժեւորում կլինի ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Սակայն Հայաստանի Հանրապետությունում տնտեսական և քաղաքական գործոնները, ինչպես նաև Ուկրաինայում շարունակվող հակամարտությունը կարող են բացասաբար ազդել Հիմնադրամի ֆինանսական կայունության վրա, որի ամբողջական հետևանքները այս պահին դժվար է կանխատեսել:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Հիմնադրամը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Ղեկավարության գնահատմամբ վերոնշյալ իրադարձությունները նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Հիմնադրամը շահույթ չհետապնդող ընկերություն է, որը ֆինանսավորվում է միջազգային դոնորների կողմից՝ իրականացնելու կրթական և հետազոտական ծրագրեր՝ ձգտելով աջակցել Հայաստանի Հանրապետությունում գիտության, կրթության, ռազմարդյունաբերության և տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտներում նորարարությունների ներդնմանը և զարգացմանը, և չկան այնպիսի գործոններ, որոնք

կասկածի տակ կդնեն այդ գործողությունների ու նախաձեռնությունների շարունակական լինելը:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա: Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Չնայած ենթադրությունները և դատողությունները հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.9 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ):

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգիչ և սարքավորումներ	-	1-3 տարի
Տնտեսական գույք	-	8 տարի:

3.3 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով , հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրվող ծախսումները, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական պարտավորություններ չափվում են իրական արժեքով հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրվող ծախսումները և չեն ճանաչվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Օտարերկրյա կազմակերպություններում ներդրումները սկզբնական ճանաչման պահին գրանցվում են իրենց իրական արժեքով, ինչը համարժեք է այդ պահին կատարվա վճարումների անվանական արժեքին: Հետագայում այդ ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

3.4 Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները ենթակա չեն բաժանման վերջինիս հիմնադիրների միջև՝ ոչ սովորական գործունեության, ոչ էլ դրա լուծարման դեպքում:

Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների ամբողջ շահույթը:

3.5 Շնորհներ և նվիրատվություններ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Ինչպես սահմանված է Հիմնադրամի կառավարման փաստաթղթերում, անսահմանափակ նվիրատվությունները ընդհանուր նպատակների համար են: Ուստի, անսահմանափակ ֆոնդ դասակարգված նվիրատվությունները ճանաչվում են եկամուտ, երբ դառնում է ստացման ենթակա: Անսահմանափակ նվիրատվությունները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով

եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

3.6 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական արդյունքի, ո՛չ էլ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

3.7 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամըպետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.8 Հասույթ

Հասույթը ձևավորվում է խորհրդատվական ծառայությունների մատուցումից և լիցենզիաների օգտագործման իրավունքի տրամադրումից:

Հասույթի ճանաչման ժամանակ Հիմնադրամն առաջնորդվում է ՖՀԴՄ 15-ի դրույթներով, այն է.

- Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- Բացահայտել կատարման պարտականությունները
- Որոշել գործարքի գինը
- Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև և
- Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Հիմնադրամը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Հիմնադրամը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգիչ և սարքավորումներ	Արտադրա-տնտեսական գույք և այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	3,247	75	3,322
Ավելացում	377	8,722	9,099
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,624	8,797	12,421
Ավելացում	2,384	2,369	4,753
Օտարում	-	(50)	(50)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,008	11,116	17,124
Կուտակված մաշվածություն			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	219	-	219
Տարվա հաշվարկ	1,138	173	1,311
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,357	173	1,530
Տարվա հաշվարկ	1,292	1,304	2,596
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(50)	(50)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,649	1,427	4,076
Հաշվեկշռային արժեք			
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,267	8,624	10,891
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,359	9,689	13,048

5 Ներդրումներ օտարերկրյա կազմակերպություններում

2021թ. դեկտեմբերին Հիմնադրամը ոչ կառավարող անդամի կարգավիճակով 200,000 ԱՄՆ դոլար ներդրում է կատարել ԱՄՆ-ում գրանցված ԻՍԹ Մենեջմենթ կազմակերպությունում: 2022թ.-ին, հաշվի առնելով այդ կազմակերպության գործունեության արդյունքները և ֆինանսական տեղեկատվության բացակայությունը, այդ ներդրումը արժեզրկվել է: 2023թ.-ին Հիմնադրամն իրականացրել է ներդրման արժեզրկման վերանայում և հակադարձման համար բավարար հայտանիշներ չհայտնաբերելու արդյունքում ղեկավարությունը գնահատել է, որ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումը շարունակում է արժեզրկված լինել:

6 Տրամադրված փոխառություններ

2021թ.-ին Հիմնադրամը տրամադրել է 25,000 հազար դրամ սկզբնական արժեքով անտոկոս փոխառություն, որոնց մարման ժամկետը պայմանագրով անժամկետ է: Ղեկավարությունը գնահատել է, որ տրամադրված փոխառությունն ամբողջությամբ կմարվի մինչև 2027թ. օգոստոսի 9-ը: Տրամադրված փոխառությունները սկզբնապես ճանաչվել են իրական արժեքով, որը որոշվել է որպես բոլոր դրամական հոսքերի ներկա արժեք զեղչած նմանատիպ գործիքների համար կիրառելի շուկայական տոկոսադրույքով, որը կազմել է 11%: Համապատասխան տոկոսային ծախսը և եկամուտը ճանաչվել են գործունեության մասին հաշվետվությունում:

	Հազար դրամ
Փոխառության անվանական արժեք	25,000
Փոխառության մարում	(1,000)
Սկզբնական ճանաչումից ֆինանսական վնաս	(11,605)
Վերաչափումից/ հակադարձումից եկամուտ	2,470
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,865
Հակադարձումից եկամուտ	1,628
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,493

7 Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ ապրանքների և ծառայությունների գծով	10,358	14,184
Առևտրային դեբիտորական պարտքեր	722,817	-
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	58,649	27,848
	791,824	42,032

Առևտրային դեբիտորական պարտքի ողջ մնացորդը Հիմնադրամի հետ կապակցված մեկ գործընկերոջ մասով է, ում ընկերությունը հաշվետու տարում մատուցել է խորհրդատվական և լիցենզիայի օգտագործման իրավունքի փոխանցման ծառայություններ (տե՛ս ծանոթագրություն 13):

8 Պաշարներ

Պաշարների մնացորդում ներառված են հաշվետու ժամանակաշրջանում հետազոտությունների իրականացման նպատակով ներմուծված և բաշխման ենթակա գիտական և նորարարական սարքեր և պահեստամասեր՝ 36,405 հազար դրամ հաշվեկշռային արժեքներով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 35,427 հազար դրամ):

9 Մնացորդներ բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արտարժույթով մացորդներ բանկերում, այդ թվում՝		
ԱՄՆ դոլար	35,318	3,646
ՀՀ դրամ	28	1,401
Եվրո	-	1
	35,346	5,048

10 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	10,946	3,103
Եկամտին վերաբերող շնորհներից փոխանցում (տե՛ս ծանոթ. 11)	4,753	10,032
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթ. 14)	(2,650)	(2,189)
Տարեվերջի մնացորդ	13,049	10,946

11 Եկամտին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	72,156	376,656
Ավելացումներ	277,167	380,212
Ակտիվներին վերաբերող շնորհներին փոխանցում (տե՛ս ծանոթ. 10)	(4,753)	(10,032)
Եկամտի ճանաչում (տե՛ս ծանոթ. 14)	(207,702)	(674,680)
Տարեվերջի մնացորդ	136,868	72,156

Բոլոր ավելացումները ստացվել են Հայ Վիրավոր Հերոսների Աջակցման Հիմնադրամ Ինք.-ից և վերջինիս՝ 2023թ.-ի ընթացքում գրանցված Հայաստանյան հասարակական կազմակերպությունից:

12 Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	377,163	26,828
Պարտավորություններ աշխատակիցների արձակուրդային օրերի գծով	2,874	1,356
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	193,446	11,925
Այլ կրեդիտորական պարտքեր	17,902	
	591,385	40,109

13 Ծառայությունների մատուցում

Հաշվետու տարում Հիմնադրամն իրեն կապակցված ռեզիդենտ կազմակերպությանը մատուցել է ամենամսյա խորհրդատվության ծառայություններ՝ մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության շրջանակներում, իսկ 2023թ. հունիս, հուլիս և օգոստոս ամիսներից յուրաքանչյուրում փոխանցել է ծրագրային լիցենզիայի օգտագործման թվով 150 իրավունք՝ յուրաքանչյուրը 1,280 հազար դրամ արժեքով: Ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ խորհրդատուների ծառայություններն ու ոչ նյութական ակտիվները Հիմնադրամը ձեռք է բերել Կիպրոսում գրանցված կազմակերպությունից:

Հասույթն ու ինքնարժեքը ըստ ծառայությունների տեսակի բաշխվել են հետևյալ կերպ.

Հազար դրամ	Խորհրդատվական ծառայություններ	Լիցենզիայի օգտագործման իրավունք
Հասույթ	254,473	576,000
Ինքնարժեք	(295,722)	(351,924)
	(41,249)	224,076

14 Նվիրատվությունից եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամտին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս ծանոթ. 11)	207,702	674,680
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս ծանոթ. 10)	2,650	2,189
	210,352	676,869

15 Նվիրաբերությունների գծով ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուսման վարձի և կեցության գծով ծախսեր	34,405	76,620
Նվիրաբերված պաշարների գծով ծախսեր	-	164,376
	34,405	240,996

16 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	33,041	-
	33,041	-

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	187,873	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	33,817	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	(776)	(0.4)
Շահութահարկի գծով ծախս	33,041	17.6

17 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքներն են մնացորդները դրամարկղում և բանկերում: Այս ֆինանսական գործիքի հիմնական նպատակն է դրանք օգտագործել նվիրատվությունների համար: Հիմնադրամը ունի նաև ֆինանսական պարտավորություններ, ինչպիսիք են կրեդիտորական պարտքերը, որոնք ուղղակիորեն առաջանում են վերջինիս գործունեությունից:

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Տնօրենների խորհուրդը վերահսկում է այս ռիսկերից յուրաքանչյուրը, որոնք նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի՝ օտարերկրյա կազմակերպություններից ձեռք բերվող ծառայություններից և արտարժույթով ստացված նվիրատվություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և հիմնական միջոցների և պաշարների արտարժույթով ձեռքբերումներից:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՆ դոլարով կրեդիտորական պարտավորությունների մնացորդը կազմել է 377,226 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 23,969 հազար դրամ):

Դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով (2022թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը.

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2023թ.	2022թ.
Շահույթ կամ վնաս	34,171	2,032

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հինմադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, կատարված ներդրումները և դեբիտորական պարտքերը:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքային ռիսկը կառավարվում է բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ղեկավարությունը հավատացած է, որ տրամադրված փոխառություններ, դեբիտորական պարտքերն ու կատարված ներդրումները կփոխհատուցվեն ամբողջությամբ՝ պայմանագրերով սահմանված դրանց մարումների ամսաթվիերին: Հետևաբար, հաշվետվու ամսաթվի դրությամբ այս ակտիվների նկատմամբ որևէ պահուստ չի ձևավորվել:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են ֆինանսական գծով կրեդիտորական պարտքերը՝ մինչև մեկ ամիս մարման ժամկետով:

18 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

18.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ստորև ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը

Տրամադրած անտոկոս փոխառությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեն 4 տարի մարման ժամկետ: Տրամադրված փոխառությունների իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: 16,493 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,865 հազար դրամ) գումարը գնահատվել է՝ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը զեղչելով 11%-ով:

19 Պայմանականություններ

19.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

20 Կապակցված կողմեր

Կողմերը սովորաբար համարվում են կապակցված, եթե կողմերը գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո կամ եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու ունակություն կամ կարող է էական ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն իրականացնել մյուս կողմի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր կապակցված կողմի հարաբերությունները դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերությունների էությանը, այլ ոչ թե միայն իրավական կողմին:

Հիմնադրամի հիմնադիրների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 1-ում: Մյուս կապակցված կողմերը ներառում են հիմնադիրների հետ կապակցված ընկերությունները: Կապակցված կողմերը կարող են կնքել այնպիսի գործարքներ, որոնք չեն կարող կնքել չկապակցված կողմերը: Կապակցված կողմերի միջև գործարքները չեն կարող ունենալ միևնույն պայմաններն և գումարները, ինչ չկապակցված կողմերի միջև գործարքները: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամն ունի համապատասխան ընթացակարգեր՝ կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացնելու և պատշաճ կերպով բացահայտելու համար:

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամը կապակցված կողմերին մատուցել է 830,473 հազար դրամի ծառայություն, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը կազմել է 722,817 հազար դրամ (2022թ.-ին կապակցված կողմերի հետ գործարքներ չի իրականացրել): Հիմնադրամի ղեկավար անձնակազմը նրա հիմնադիրն է, ով գործում է կամավորության հիմունքներով և հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամից աշխատավարձ և այլ հատուցումներ չի ստացել:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 02.09.2024 16:21